**Հայաստանի Հանրապետությունը թվով 3-րդ Հանրապետությունն է, թե՞ ....**

14.02.2012 09:03

# **Հայաստանի Հանրապետությունը թվով 3-րդ Հանրապետությունն է**, թե՞ ....

Մեր քաղաքացիներից շատերի մոտ գոյություն ունի այն կարծիքը, թե ներկայիս Հայաստանի Հանրապետությունը 3-րդ հանրապետությունն է: Ըստ այս տեսակետի՝ ստացվում է, որ 1-ին Հանրաեպետությունը 28-ը մայիսի, 1918թ.-ին հիմնադրված Հայաստանի Հանրապետությունն է, 2-րդը՝ Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունն է (1921թ.), իսկ 3-րդը՝ ներկայիս Հայաստանի Հանրապետությունն է: Այս կարծիքը սխալ է Միջազգային հանրային իրավունքի տեսակետից, քանի որ, թե՝ 1921թ.-ին, և թե՝ 1991թ.-ին, **նոր Հայաստանի Հանրապետություններ չեն հիմնադրվել:**

Իրականում 28.05.1918թ.-ին հիմադրված Հայաստանի Հանրապետությունը 1921թ.-ին մուտք է գործել ԽՍՀՄ, իսկ 1990թ.-ին դուրս է եկել ԽՍՀՄ կազմից: Հայաստանի Հանրապետության 23.08.1990թ.-ի Անկախության Հռչակագրի 1-ին կետում հստակ նշված է, որ. ***''Հայկական ԽՍՀ-ն վերանվանվում է Հայաստանի Հանրապետություն, կրճատ՝ Հայաստան'':*** Սա նշանակում է, որ Հայ ժողովուրդը նոր պետություն չի հիմնադրել 1990թ.-ին, (1921թ.-ին նույնպես):

Հետևաբար՝ ներկայիս Հայաստանի Հանրապետությունը դա՝ 1918թ.-ի մայիսի 28-ին հիմնադրված Հայաստանի Հանրապետությունն է՝ **Հայ ժողովրդի 1-ին հանրապետությունը:** Փորձենք ճիշտ ձևավորել մեր՝ կայացման ճանապարհին գտնվող հանրապետության իրավական կարգավիճակի մասին պատկերացումը:

Նշեմ նաև, որ թե՝ **Ադերբեջանը, թե՝ Վրաստանը** 1991թ.-ին չպահպանեցին իրավական կապը իրենց նախկին հանրապետությունների հետ և հիմնադրեցին նոր Հանրապետություններ:

**Վարուժան Վարդանյան**
Փաստաբան, Իրավախորհդատու
''ՎԱՐԴԱՆՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԸԿԵՐՆԵՐ''
իրավաբանական գրասենյակի հիմնադիր-տնօրեն

Երևան,0002, Սարյան 21/4
varuzhan.vardanyan@gmail.com
http://vardanyanlaw.com/
+374 077500060

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })